ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԶԱԼԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԽԱՂԵՐԸ

07.06.2021 17:04

2021 թվականի **հունիսի 6-ին** տեղի ունեցան ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կազմակերպած **«Փաստաբանների ֆուտզալի գավաթ 2021»** մրցաշարի երկրորդ խմբի խաղերը:

Երկրորդ խմբում ընդգրկված էին «Արարատ», «Օլիմպ», «Երևան» և բացառապես Փաստաբանական դպրոցի ունկնդիրներից կազմված «Փաստաբանական դպրոց» թիմերը:

Ներխմբային խաղերի արդյունքներով **երկրորդ խմբի առաջատարը «Փաստաբանական դպրոց» թիմն է** (մասնակիցներ՝ Վահան Սարգսյան, Էդգար Արսենյան, Վաչե Սիմոնյան, Արամ Կարապետյան, Արման Զոբանյան, Գարիկ Նահապետյան, Հարություն Հարությունյան):

Խմբային խաղերն ավարտվել են և երկու խմբերի առաջատարները եզրափակիչ խաղերում կչափեն իրենց ուժերը մրցանակային տեղերի համար:

Մրցանակային տեղերի համար պայքարից դուրս մնացած թիմերը կարող են անցկացնել ևս մեկ ընկերային խաղ:

Եզրափակիչ խաղերի ավարտից հետո կամփոփվեն մրցաշարի արդյունքները, կկատարվի մրցանակաբաշխության արարողություն:

Բոլոր մասնակիցները կպարգևատրվեն հավաստագրերով, իսկ մրցանակային տեղեր գրաված թիմերը՝ պատվոգրերով և մեդալներով:

Մրցանակները հաղթողներին կհանձնեն ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝ **Արա Զոհրաբյանը** և հռչակավոր ֆուտբոլիստ **Խորեն Հովհաննիսյանը**:

Եզրափակիչ խաղերը և մրցանաբաշխությունը տեղի կունենան **Երևանի պետական համալսարանի մարզադահլիճում, սկիզբը՝ 2021թ-ի հունիսի 13-ին,** ժամը 10:30-ին: **Մուտքն ազատ է:**



ARMENIA
NS 2021

GALAXY
CHAMPIONS
LEAGUE 2021
GALAXY
CHAMPIONS
LEAGUE 2021

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })